

ԾՐԱԳԻՐ

**«ԱՏԱՄՆԱՅԻՆ ԻՄՊԼԱՆՏԱՑԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ
 ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅԻ**

Հունիսի 17-18, 2022թ., ք. Երևան («Մեդիտրինա» ուսումնական կենտրոն)

«Մեդիտրինա ուսումնական կենտրոն» ՍՊԸ

Օր 1՝ հունիսի 17 Տեսական մաս		
10:00-11:00	Իմպլանտացիայի շրջանում անատոմիան <ul style="list-style-type: none"> • Ծնոտների տարբեր հատվածների կառուցվածքային առանձնահատկությունները և դրանց դերը իմպլանտների տեղադրման գործում • Վերին ծնոտի տոպոգրաֆիա • Ծնոտի առաջային հատվածի կառուցվածքային առանձնահատկությունները բավարար էլթետիկ արդյունք ստանալու համար • Վերծնոտային ծոցի և վերին ծնոտի կողմնային հատվածի իմպլանտների տեղադրման մարտավարությունը • Ստորին ծնոտի տոպոգրաֆիա • Ստորին ծնոտի կողմնային հատվածի և ստորատամնաբնային նյարդի տեղակայման կառուցվածքային առանձնահատկությունները • Իմպլանտների տեղադրման սկզբունքները կախված ստորատամնաբնային նյարդի հետ փոխհարաբերությունից: 	Զաքարյան Արթուր/ Կարպովա Տատյանա
11:00-12:00	Պարոդոնտ <ul style="list-style-type: none"> • Պարոդոնտի կենսատիպը: Պարոդոնտի կենսատիպից կախված իմպլանտի տեղադրման ալգորիթմների որոշում • Արյունամատակարարման դերը հյուսվածքների կայունության ապահովման հարցում • Ամրացված լինդ և շարժուն լորձաթաղանթ : Ամրացված լինդի դերը իմպլանտի շուրջ • Իմպլանտի շուրջ լինդի ռեցեսիայի պատճառները: Կենսաբանական տարածություն և դրա առանձնահատկությունները իմպլանտի շուրջ: 	
12:00-12:30	Ընդմիջում	
12:30-13:30	Ոսկրային հյուսվածք <ul style="list-style-type: none"> • Ոսկրային հյուսվածքի հյուսվածաբանական 	

	<p>կառուցվածքը և տարբեր շերտերում արյունամատակարարման առանձնահատկությունները: Ոսկրային արյունամատակարարման դերը իմպլանտի շուրջ ոսկրի երկարատև կայունության համար</p> <ul style="list-style-type: none"> • Ոսկրի քայքայման պատճառները իմպլանտի շուրջ: Ոսկրի դասակարգումը ըստ տեսակի: Իմպլանտի ձևի ընտրությունը կախված ոսկրի տեսակից: 	
13:30-14:30	<p>Ատամնային իմպլանտացիա</p> <ul style="list-style-type: none"> • Ատամնային իմպլանտացիայի ցուցումները և հակացուցումները • Բերանի խոռոչի և իմպլանտի շրջանում հյուսվածքների գնահատում • Իմպլանտացիայի պլանավորման սկզբունքները հիմնված ՀՇ և օրթոպանտոմոգրամմայի վրա • Ռենգեն ախտորոշումը իմպլանտացիայի շրջանում: Ռենգեն նկարի քայլերի հաջորդականությունը • Իմպլանտների ճիշտ ընտրությունը կախված ոսկրի տեսակից: Իմպլանտի տեսակը և դրա դերը իմպլանտացիայի գործում • Ոսկրի նեկրոզ: Ճնշման հետևանքով ոսկրային նեկրոզ: Ճնշման թույլատրելի սահմանը իմպլանտի տեղադրման ժամանակ • Իմպլանտի կայունությունը օստեոինտեգրման հարցում: Մեխանիկական և կենսաբանական սկզբունքները իմպլանտների օստեոինտեգրացիայի մեջ: Իմպլանտների առաջնային կայունություն, առաջնային կայունության կորուստ, երկրորդային կայունություն: 	Զաքարյան Արթուր/ Կարպովա Տատյանա
14:30-15:00	Ընդմիջում	
15:00-15:30	<p>Իմպլանտի չափսի ճիշտ ընտրությունը և տեղադրման սկզբունքները:</p> <ul style="list-style-type: none"> • Իմպլանտի երկարության և տրամագծի ընտրություն վերին ծնոտի տարբեր խմբի ատամների դեպքում • Իմպլանտի տեղադրման դերը երկարատև ֆունկցիոնալության համար: Իմպլանտի սխալ տեղադրման պատճառով առաջացող բարդություններ: Ալվեոլյար ոսկրում իմպլանտի • տեղադրման սկզբունքները 	
15:30-16:00	<p>Իմպլանտի մակերեսը</p> <ul style="list-style-type: none"> • Օստեոինտեգրացիայի մեջ իմպլանտի մակերեսի առանձնահատկությունը • Կենսաբանական և մեխանիկական ասպեկտները օստեոինտեգրացիայում: Օստեոինտեգրացիայի վրա ազդող գործոնները: 	
16:00-16:30	<p>Իմպլանտների կառուցվածքային առանձնահատկությունները</p> <ul style="list-style-type: none"> • Իմպլանտի շուրջ ոսկրի պահպանման վրա ազդող գործոններ: «Zero Bone Loss» կոնցեպտիայում: • Իմպլանտ-աբաթմենտ միացումը: «Պոմպային էֆեկտ» և ոսկրի քայքայման դեպքում դրա ազդեցությունը: • Շարակցահյուսվածքային միակցման դերը ոսկրի պահպանման համար: 	
16:30-18:00	Իմպլանտացիայի վիրաբուժական փուլ	

	<ul style="list-style-type: none"> • Հիվանդի նախապատրաստման առանձնահատկությունները իմպլանտացիայի ժամանակ: • Իմպլանտացիայի համար ժամանակակից գործիքներ և սարքավորումներ: Դրանց կիրառման տեխնիկան: • Իմպլանտացիայի վիրաբուժական հավաքածու: Իմպլանտացիայի ուղեցույց և աշխատանքային առանձնահատկություններ: • Կտրվածքների և լաթերի տեսակները: • Իմպլանտի շուրջ լնդի ծավալի մեծացման ժամանակակից մեթոդներ՝ • «Ստրիպ» տեխնիկա • «Պանչո» տեխնիկա • «Ռոլլ» տեխնիկա • Կարանյութերի և ասեղների տեսակները: Կարանյութերի ընտրության սկզբունքները, տարբեր կարանյութերի առավելություններն ու թերությունները: Կարերի տեղադրման կանոնները: Կարերի տեսակներն ու դրանց կիրառման ցուցումները: • Փափուկ հյուսվածքների վերականգման սկզբունքները ու լնդի վերականգման վրա ազդող գործունեությունները: • Հիվանդների հետվիրահատական վարման ուղեցույցը: 	
18:00-18:45	Ամփոփում, կոնկրետ կլինիկական դեպքերի քննարկում	
Օր 2՝ հունիսի 18		
Գործնական աշխատանք՝ առաջին խումբ		
10:00-11:00	Արհեստական լնդի վրա կտրվածքների իրականացում	Զաքարյան Արթուր/ Կարպովա Տատյանա
11:00-12:00	Կարերի տեղադրման տեխնիկաներ	
12:00-12:30	Ընդմիջում	
12:30-14:00	Իմպլանտների տեղադրում	
Գործնական աշխատանք՝ երկրորդ խումբ		
15:00-16:00	Արհեստական լնդի վրա կտրվածքների իրականացում	Զաքարյան Արթուր/ Կարպովա Տատյանա
16:00-17:00	Կարերի տեղադրման տեխնիկաներ	
17:00-17:30	Ընդմիջում	
17:30-19:00	Իմպլանտների տեղադրում	

Թիրախային լսարան՝ բժիշկ-ստոմատոլոգներ և դիմաձևոտային վիրաբույժներ:
Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ յուրաքանչյուր խմբում 25-30:

Գործնական աշխատանքների ընթացքում մասնակիցներին ներկայացվելու և քննարկվելու են կլինիկական դեպքեր, նրանցից յուրաքանչյուրը հնարավորություն կունենա ներկայացնելու նաև սեփական աշխատանքի ընթացքում հանդիպած բարդ կամ առանձնահատուկ կլինիկական իրավիճակները, քննարկելու բուժման և հիվանդների վարման օպտիմալ տարբերակները դասընթացավարների հետ:

Ծրագրի կարևոր և խիստ արժեքավոր մասն են կազմում մուլյաժների, ֆանտոմների վրա մասնակիցների կողմից իրականացվող գործնական աշխատանքները, որոնք կնպաստեն նրանց գործնական հմտությունների և կարողությունների զարգացմանը: